Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

13689
9.09.2013
25 SEP 2006
08 DEC 2008

Հ. Ս. Խ. Հ.
ԿԵՆՏՎԻՃԱՎԱՐ

Խ. Ս. Հ. Մ.

Ա. Ս. Ֆ. Խ. Հ.
ԿԵՆՏՎԻՃԱՎԱՐ

1926 Թ. ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ

ՁԵ № 9

ՀՐԱՀԱՆԳ ԿԱԼՎԱԾԱԹԵՐԹԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

1003
13689

1· Կալվածաթերթը կազմվում է յուրաքանչյուր առանձին, թեկուզ դեռևս չկառուցված տնատեղ (дворовой) հողամասի համար և համարակալվում է ցուցակագրողի կողմից նույն հերթահամարով, ինչպես վոր կա գրված ցուցակագրողի շրջանի ժնջ մտած կալվածների ցուցակում (քաղաքային ցուցակագրողի վերստուգողական թերթիկ)։ Այն ամայի հողամասերը, վորոնք ցանկապատերով, ոյուներով կամ ուրիշ յեղանակներով, չեն առանձնացրված և չեն եկ ծառայում իբրև բանջարանոցներ կամ աղբանքների պահեստներ, չեն ցուցակագրվում։

2· Այն հարակից հողամասերը, վորոնք բնդհանուր բակ ունեն, ցուցակագրվում են իբրև մի կալված, յեթե այդ հողամասերում գտնվող շինությունները պատկանում են մի տիրոջ։

Բնակատարվի հատակագիծ ունեցող քաղաքներում ամեն հողամաս, վոր ունի առանձին նոմեր, համարվում է առանձին կալված։

13689

3. Մի անատեղ հողամասի համար հարկավոր է կազմել յերկու կամ ավելի կալվածաթերթիկ, հետևյալ դեպքերում.

ա) յերբ ամյալ անատեղ հողամասում գտնվող շինությունները պատկանում են զանազան տերերի,

բ) յերբ ազգայնացրած կամ քաղաքապետական դարձրած (մունիցիպալիզացիայի յենթարկված) կալվածի տերը ամյալ հողամասում յեղած շինություններից մի քանիսն ինքն է շահագործում, իսկ մյուսները վարձու է տալիս յերկարատև վարձակալության պայմանով,

գ) յերբ ազգայնացրած կամ քաղաքապետական դարձրած կալվածի տերը ամյալ հողամասում գտնվող շինությունները վարձու է տալիս յերկարատև վարձակալությամբ զանազան վարձակալներին, որինակ. ամյալ հողամասերում յեղած յերեք տներից մեկը վարձու է տրվում հիմնարկության, մյուսը բնակարանային կոոպերատիվին, յերրորդը՝ մասնավոր անձի:

Բոլոր հիշյալ դեպքերում, յուրաքանչյուր առանձին տիրոջ կամ վարձակալի տնօրինությանց տակ գտնված շինությունները ցուցակագրվում են առանձին թերթիկում, իսկ անատեղ հողամասի ամբողջ տարածությունը բաժանվում է նրանց մեջ ինչպես վար ցույց և տրվում ը. մասի 5-րդ հարցում:

դ) Յերբ շինությունները (քաղաքապետական դարձրած) նախկին տիրոջը վերադարձնելիս այս վերջինիս ոգտագործումից դուրս են հանված անատեղի այս կամ այն մասերը, որինակ. այդին, բանջարանոցը և այլն:

Այս դեպքում անատեղի այն մասերը, վորոնք հանված են տիրոջ ոգտագործումից ցուցակագրվում են իրրև մի առանձին չհաստատված կալվածք:

Ծանոթություն.—Բոլոր մատնանշված դեպքերում թերթիկի հատկամասում տան №-ը հարցում դրվում է միևնույն նոմերը (տանատեղ հողամասի բնակարանի նոմերը), իսկ անատեղի այն առանձին մասերը, վորոնց համար կազմված են առանձին կալվածաթերթեր, նշանակել հատուկ լիտերներով «Ա», «Բ», «Գ» և այլն:

2. ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԼՎԱԾԱԹԵՐԹԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՐՑԵՐԻ ԱՌԹԻՎ

2-րդ հարցում.—Այստեղ ցույց են տրվում այն շինությունների տերերը, վորոնք գտնվում են ցուցակագրվող կալվածում: Չկատուցված կալվածի համար ցույց տալ նրա իսկական ոգտագործողին:

3-րդ հարցում.—Պատասխանը տրվում է այն դեպքում միայն, յերբ ամբողջ կալվածքը վարձակալության է տրված հատուկ պայմանագրով: Բնակարանների սովորական վարձով տալը, թեկուզ բնակարանները ըստ կացած լինեն մի ամբողջ տնից, այդ վարձակալություն չի համարվում:

4-րդ հարցում.—Կատուցված է համարվում ամեն մի կալվածք, վորտեղ կա թեկուզ մի բնակելի տուն և կամ աշխատա-արդյունաբերական կամ հասարակական նպատակի ծառայող շինություն (խանութներ, չայխանաներ, պահեստներ, յեկեղեցիներ, թատրոններ և այլն), բայց բանջարանոցներին, փայտի պահեստներին կից պահապանի տնակները, այդիներում հնձանները և մառանները հաշվի չեն առնվում, և նման կալվածները համարվում են չկատուցված:

ՀՀ Ազգային գրադարան
NL0189247

5–րդ հարցում.—Կալվածի տարածությունը նշանակվում է փաստաթղթերի հիման վրա կամ տերոջը հարցնելով: Յեթե մի տնատեղ—հողամասում կազմված են մի քանի կալվածաթերթեր (տես հրահանգի 1–ին մասի 3–րդ կետը), տնատեղի հողամասի տարածությունը բաժանվում է այդ կալվածների մեջ, ըստ վորում յուրաքանչյուր կալվածաթերթում գրվում է տնատեղի այն մասերի տարածությունը, վորոնցից ոգտվում է տերը կամ վարձակալը, և վորոնց վրա յել կազմվում է թերթը: Տնատեղի այն մասերը, վորոնցից ոգտվում են բոլորը, հավասարապես բաժանվում է ոգտվողների մեջ:

6 և 7–րդ հարցերում.—Այստեղ նշանակվում է կալվածը ջրմուղի կամ կոյուղու ցանցին միանալու փաստը, անկախ նրանից, թե արդյոք ջրմուղը կամ կոյուղին հանրոգուտ ձեռնարկություններ են, թե նրանք պատկանում են ֆաբրիկաներին, գործարաններին, յերկաթուղիներին, կուրորտային վարչություններին և այլն:

Ջրմուղի և կոյուղու գործունեության կարճատև դադարը (վոչ ավելի 1 ամսից) պատահական անկանոնության հետևանքով կամ վճարը չմուծելու հետևանքով կալվածը ցանցից հանելը ուշադրության չի առնվում, և այդ կալվածները դասվում են գործող ջրմուղ և կոյուղի ունեցող կալվածների շարքը:

8–րդ հարցում.—Կալվածքում գտնվող քանդված, անչեն մնացած, չինվող տների թիվը հաշվի առնելու համար, պետք է նկատի ունենալ միմիայն բնակելի կամ բնակության համար նշանակված շինությունները:

9–րդ հարցում.—Շինություն է համարվում ամեն մի շինվածք, վոր գտնվում է մի ընդհանուր տանիքի տակ, ինչ վորում բրանդմաուերները (միջնապատերը), հարտարապետական զարդարանքները, չարդախները (կիսահարկերը) և թեթև հարակից շինվածքները տանիքի անընդհատությունը խախտող չեն համարվում: Շարժական շինությունները, ծածկված ապրա–արկղները, ջրհորների ծածկերը և գերեզմանատների հուշարձանները շենքեր չեն համարվում:

«Ինչ նպատակի համար և շինվածքը» սյունակում, խառը տեսակի շինությունների մասին ցույց է տրվում շինվածքի հիմնական նպատակը. յեթե շինության մեջ կան բնակելի կացարաններ, պետք է այդ ցույց տալ, որինակ. «Թատրոն—բնակելի տեղով» «հիմնարկություն բնակելի տեղով միասին»: Բնակության մասին ցույց է տրվում բոլոր դեպքերում, յերբ շինվածքի մեջ կա թեկուզ մի բնակելի կացարան:

Շինության հարկերի թիվը վորոշելիս կիսանկուղները, նմանապես չարդախները ու վերնատները, հաշվի չեն առնվում: Յեթե շինության զանազան մասերում կան զանազան թվով հարկեր, ցույց է տրվում հարկերի ամենաբարձր թիվը:

Շինության ավարտելու ժամանակը համարվում է այն մոմենտը, յերբ շինվածքը հասցրված է այնպիսի դրության, վոր նա արդեն պիտանի յե բնակեցնելու կամ ոգտագործելու համար, թեկուզ այդ մոմենտին վոչ բոլոր շինարարական աշխատանքներն ավարտված լինեն, որինակ՝ ներկելը, սվաղելը, ներքին սարքավորումը, ջրմուղի պատրաստելը և այլն:

10–րդ հարցում.—Այստեղ ցույց են տրվում միմիայն հասակավոր անասունները բանող հասակի ձիերը, եշերը և ջորիները, 2 տարեկանից վեր կովերը, խոզերն

ընտ վորում բրանդմաուերները (միջնապատերը), հարտարապետական զարդարանքները, չարդախները (կիսահարկերը) և թեթև հարակից շինվածքները տանիքի անընդհատությունը խախտող չեն համարվում: Շարժական շինությունները, ծածկված ապրա–արկղները, ջրհորների ծածկերը և գերեզմանատների հուշարձանները շենքեր չեն համարվում:

«Ինչ նպատակի համար և շինվածքը» սյունակում, խառը տեսակի շինությունների մասին ցույց է տրվում շինվածքի հիմնական նպատակը. յեթե շինության մեջ կան բնակելի կացարաններ, պետք է այդ ցույց տալ, որինակ. «Թատրոն—բնակելի տեղով» «հիմնարկություն բնակելի տեղով միասին»: Բնակության մասին ցույց է տրվում բոլոր դեպքերում, յերբ շինվածքի մեջ կա թեկուզ մի բնակելի կացարան:

Շինության հարկերի թիվը վորոշելիս կիսանկուղները, նմանապես չարդախները ու վերնատները, հաշվի չեն առնվում: Յեթե շինության զանազան մասերում կան զանազան թվով հարկեր, ցույց է տրվում հարկերի ամենաբարձր թիվը:

Շինության ավարտելու ժամանակը համարվում է այն մոմենտը, յերբ շինվածքը հասցրված է այնպիսի դրության, վոր նա արդեն պիտանի յե բնակեցնելու կամ ոգտագործելու համար, թեկուզ այդ մոմենտին վոչ բոլոր շինարարական աշխատանքներն ավարտված լինեն, որինակ՝ ներկելը, սվաղելը, ներքին սարքավորումը, ջրմուղի պատրաստելը և այլն:

10–րդ հարցում.—Այստեղ ցույց են տրվում միմիայն հասակավոր անասունները բանող հասակի ձիերը, եշերը և ջորիները, 2 տարեկանից վեր կովերը, խոզերն

առանց գոնիների և խոհարարների, վոչխարներն ու այծերն առանց գառների և ուլերի։

12-րդ հարցում.—Բնակելի կացարանների ցուցակը լրացվում է ամեն մի կացարանում առանձին այն անձանց անձնական ու բնականական թերթիկները կազմելու ժամանակ, վորոնք ապրում են այդ կացարանում. ստացված տեղեկությունները ստուգվում են անային վարչության մեջ կամ անասիրոջ կողմից։ Դատարկ կացարանների վերաբերյալ տվյալները ստացվում են անասիրոջից կամ անային վարչությունից։

Ցուցակի մեջ գրանցվում են այն բոլոր բնակելի կացարանները, վորոնք գտնվում են տվյալ կարվածում, այսինքն, թե բռնված և թե դատարկ բնակարանները և հանրակացարանները (բանվորական հանրակացարանները, զորանոցները, հիվանդանոցները, բանտերը, մանկատները, աշակերտական հանրակացարանները և այլն)։

Բնակարաններն ու մյուս բնակելի կացարանները գրվում են այն նոմերով, վոր համարով վոր նա նշանակված է տան վարչության մոտ, իսկ յերթե բնակարանները համարներ չունեն, ցուցակագրողն ինքն և նրանց համարակալում։

«Ինչով է բռնված, թե դատարկ է» սյունակում բռնված բնակարանների մասին գրվում է «բնակելի կացարան», հանրակացարանների համար ցույց է տրվում հանրակացարանի բնույթը (հիվանդանոց, մանկատուն, ծառայողների հանրակացարան), դատարկ կացարանների համար գրվում է «դատարկ է»։

Առանձին բնակելի կացարան է համարվում ամեն մի կացարան, վոր ծառայում է բնակվելու համար (թեկուզ մարդահամարի մոմենտին նա դատարկ էլ լինի) և մյուս կացարաններից կտրված է պատերով, ու ունի դրսից իր առանձին անմիջական մուտքը։ Իրրև առանձին բնակարաններ ընդունել բարապանի (չվեյցար) սենյակը սանդուղքների տակ և ընդհանուր մուտքի նախասրահում, զոնապանի սենյակը և պահապանի անակը (նույնպես և անբնակելի շինություններում ու անկատույց կարվածներում)։

Այն հիմնարկությունների ու ձեռնարկությունների կացարանները, վորոնք բնակիչներ չունեն, թեկուզ նրանք կարող էլին բնակության համար ծառայել (գիվանատները, դրասենյակները, ակումբները և այլն), բնակելի կացարաններ չեն համարվում և ցուցակագրվում են վոչ թե 12-րդ ապյուսակում, այլ 13-րդ ապյուսակում։ Յերթե կացարանի մի մասը ծառայում է բնակության համար, իսկ մյուս մասը՝ ոգտագործվում է հիմնարկության, առևտրական ձեռնարկության, դրասենյակի, պահեստի համար և այլն ու կացարանի այդ մասում վոչ վոք չի ապրում, բնակելի կացարանների ցուցակում (12-րդ կետ) ցուցակագրվում է այն մասը միայն, վոր բնակության համար է ծառայում, իսկ մնացյալ մասը գրվում է 13-րդ հարցի ապյուսակում, կացարանի այն մասերը վորոնք միաժամանակ ծառայում են և բնակության և առևտրա-արդյունաբերական նպատակների համար, օրինակ՝ արհեստավորական-անայնագործական արհեստանոցները, վորտեղ ապրում են այդ արհեստանոցների տերերը կամ բանվորները, մտցվում են բնակելի կացարանի կազմի մեջ։ Նմանապես բնակելի կացարանի կազմի մեջ են մտցվում բժշկների

ու առամնաբուժների բնակարաններին կից պահվող ընդունելության առանձնասենյակները (կաբինետները)։

Բանվորների, ծառայողների և մյուս հանրակացարանները, վորտեղ ընտանիքներն առանձին սենյակներ ունեն և դուրս են գալիս մի ընդհանուր հաչա (կորիդոր), ցուցակագրվում են իրրև մեկ բնակելի կացարան։ Զորանոցային տիպի հանրակացարաններում, ինչպես օրինակ՝ հիվանդանոցները, կալանավորության վայրերը, գրանոցները և այլն, այդ հիմնարկությունների ծառայողների բնակության համար հատկացրված մեկուսացված կացարանները, համարվում են առանձին կացարաններ։

Բնակարաններում եղած բնակելի սենյակների թիվը նշանակվում է թվերով, բայց վորում խոհանոցը, հաչաը, խարտանոցը, լուսամուտ չունեցող սենյակները վաննայի սենյակները և սպասարկության մյուս կացարանները այդ թվի մեջ չեն մտնում, թեկուզ նրանք բնակվելու համար էլ ծառայելիս լինեն։ Սակայն այն բնակարանը, վոր բաղկացած է սենյակ-խոհանոցից, այդպիսին համարվում է բնակելի սենյակ։ Առանձին սենյակներ չեն համարվում սենյակի այն մասերը, վորոնք բաժանված են չարժական կալված քներով (պատի ու առաստաղի մեջ չմտնող)։ Բնակելի սենյակների տարածությունը նշանակվում է բնակիչներին հարցնելու միջոցով և անային վարչության ավյալների հիման վրա։

Բնակարանի բնակելի տարածության մասին ստացված թիվը համեմատվում է այդ բնակարանում ապրող առանձին ընտանիքների վրա հաշվված բնակելի տարածության թվերի հետ։ Բնակարանի բնակելի տարածությունը պետք է հավասարվի բնակարանում ապրող

բոլոր ընտանիքների վրա հաշված բնակելի տարածությունների ընդհանուր գումարին, դրա վրա ավելացնելով նաև այն բնակելի սենյակների տարածությունը, վորոնք մարդահամարի միջոցին վոչ վոքի կողմից զբաղեցրած չեին։

13-րդ հարցում։—«Ինչ նպատակի համար և շինված քը» պատասխանում գրել թե ավյալ շինվածքը բուն իր բնույթով ինչ նպատակով է շինված, իսկ «ինչով է բռնված, թե զատարկ է» պատասխանում նշանակվում է թե ինչպես է պատասխանվում մարդահամարի բոպելին, օրինակ՝ շինվածքի նպատակը—«բնակելի բնակարան» ինչով է բռնված —«ակումբ» կամ շինվածքի նպատակը—«խանութ» ինչով է բռնված՝ «տեղական գրասենյակը»։

«Տարածություններ» պատասխանում գրվում է ամբողջ անբնակելի կացարանի կամ շինվածքի հատակի տարածությունը, նրա անատիրոջը, տիրոջը կամ վարձակալին հարցնելու միջոցով։

12-րդ և 13-րդ հարցերում բնակելի ու անբնակելի կացարանների տարածությունը գրվում է քառակուսի մետրերով։

Դանոթություն։—Այն քաղաքային բնակավայրերում, վորտեղ գեռևս չեն անցել մետրային չափերին, իբրև ոնը և վերապահվում ցուցակագրումը կատարել քառ. արշիններով այն պայմանով միայն, վորպեսզի միևնույն քաղաքի սահմաններում ցուցակագրությունը լինի միաձև։ Յեթե ավյալ քաղաքում վորոշված է գրել քառ. մետրերով, այդ դեպքերում մինչև մարդահամարը սկսվելը ցուցակագրողը բոլոր թերթերի վրա «քառակուսի արշիններով» պատ-

նակը ընդում է և ընդհակառակը։ Յեթե հաբ-
ման լենթարկվողը պատասխանները ասվեց և
ուրիշ չափերով, այն ժամանակ ցուցակագրողը
նրանց վերածում է, ընդունելով քառ. մետրը
հավասար 2 քառ. արշինի։

ՀԱՅ. Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԳԱՐԱՆ
S.S.R.A. ԱՌՈՒՅԳՈՅՈՒ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ
7/XI 1922
ՄՈՍԿՎԱ, Ռոժդեստվենսկայա 9
Ա. ՍԲԱՍՏԻ ՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրաշարեպ. 2260գ. Պատ. 652 Տիրաժ 500